

**ՀՀ ԿՇՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ Ս/Թ ՆՈՅՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ Ազգային ժողովի ս/թ նոյեմբերի 12-ի նիստում պատգամավորների հարցերին ՀՀ կառավարության անդամների պատասխանների ժամանակ Շիրակի մարզի Ողջի համայնքի ընտրությունների վերաբերյալ արված հայտարարություններում, իսկ հետագայում նաև մամուլում տեղ են գտել ՀՀ ընտրական օրենսգրքի /այսուհետ՝ օրենսգիրք/ նորմերի կամայական մեկնաբանություններ, ինչը պարտադրում է մեկ անգամ ևս անդրադառնալ խնդրին՝ ընտրողների կողմից տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ **նաև** համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:

Օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,...» նորմը վերաբերում է Հանրապետությունում անցկացվող բոլոր ընտրություններին, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Այս նորմն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում, այդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցության հնարավորությունը: ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 2-րդ մասի ընձեռած հնարավորությունից է, որ օրենսգիրքը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք է վերապահել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունենալու և փաստացի բնակվելու պայմանով:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն /տես նաև օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ կետը/ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները, իսկ օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով:

Ավելորդ չէ հիշեցնել, որ

ա/ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն,

բ/ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն իր կողմից կիրառվող իրավական ակտի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ս/թ հոկտեմբերի 17-ին տվել է հետևյալ պաշտոնական պարզաբանումը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

17 հոկտեմբերի 2008թ.  
ք.Երևան

N 56

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԻ  
2-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,...»: Օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Օրենսգրքի նշված դրույթները վերաբերում են Հանրապետությունում անցկացվող բոլոր ընտրություններին, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Օրենսգիրքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար քվեարկություններին մասնակցելու, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, այլ սահմանափակումներ չի նախատեսում, ավելին, օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով:

2. Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին նախադասության 2-րդ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքին: Համաձայն այս դրույթի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:

Հարգանքով՝

**ՀՀ կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի նախագահ  
Գ. Ազարյան**